ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

« ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան 18 ապրիլի 2018թ.

Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Մելքոնյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Կ.Քարտաշյան,Ա.Կիրակոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հովհաննիսյան

«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով ընթացակարգի N9 չափաբաժնի մասով գնման գործընթացը շարունակելու վերաբերյալ

1. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար, 2018թ. ընթացքում սննդամթերքի ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման միջոցով, էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով ընթացակարգի N9 չափաբաժնի մասով 30.03.2018թ. **Վյաչեսլավ Ամիրջանյան Ա/Ձ-ն** ներկայացրել է թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/49 բողոքը՝ ընդդեմ **«Խոսրով Ջահինյան» Ա/Ձ-ի** և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնաբերաբար կասեցվել էր գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ: Հաշվի առնելով, որ թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/49 բողոքի վերաբերյալ որոշումը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում, «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1.1. Շարունակել «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով ընթացակարգի N9 չափաբաժնի մասով գնման գործընթացը և հիմք ընունելով 17.04.2018թ.-ին կայացրած ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/49 որոշումը մերժել Ա/Ձ Խոսրով Ջահինյանի կողմից ներկայացված հայտը:

1.2. «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնման ընթացակարգի N9 չափաբաժնի մասով հաջորդաբար առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել ՝ «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ին և ծանուցում ուղարկել «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ին, առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը:

1.3. Քանի որ, «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ն հանդիսանում է «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնման ընթացակարգի NN2, 8, 10, 12, 13, 14 չափաբաժնի մասով ընտրված՝ հաղթող, մասնակից, որի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե արդեն իսկ

ներկայացվել է հարցում (Հավելված 8)՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ, ուստի երկրորդ անգամ նշված հարցումը ներկայացնելու անհրաժեշտություն չկա:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Վ.Մելքոնյան

Քարտուղար՝ ---------- Հ.Հովհաննիսյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Կ.Քարտաշյան

2. ---------- Ա.Կիրակոսյան